# ՀՐԱՄԱՆ

## ԿԿԲ ՀԵՂ-ՌԱԶՄ. ԽՈՐՀՐԴԻ

## № 16

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԴԱՍԱԿԻ ՅԵՎ ՎԱՇՏԻ ՀԱՄԱՐ

355.3
Կ-76

ՊԵՏՀՐԱՏ — ՌԱԶՄՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ — 1933

23 MAY 2013
41.339
2708
38

Թարգմանեց՝ Գրաքիռ
Սրբագրեց՝ Հ. Սարիկյան
Պետհրատի տպարան
Գլավլիտ № 8107 (բ)
Հրատարակ. № 2585
Տիրաժ 1000

Հանձնված է տպագրության 31|III 1933 թ.
Ստորագրված է տպելու 10|IV 1933 թ.

1 MAR 2010
355.3
Կ-76

# ՀՐԱՄԱՆ

## ԿԿԲ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

### ՔԱՂ. ԹԻՖԼԻՍ, № 16, 6 ՄԱՐՏԻ 1933 Թ.

§ 1.

*Բանակի զորամասերի մարտական ու քաղաքական պատրաստության բարձրացման մեջ առավելագույն արդյունքների հասնելու նպատակով և լավագույն ձևով կատարելու Բաքվի պրոլետարիատի հետ կնքած սոցմրցակցության պայմանագրի պարտավորությունները, ԿԿԲ-ՀՌԽ մարտի 10-ից մինչև մայիսի 10-ը հայտարարում է բանակային մրցակցություն՝ ձմրան շրջանի մարտական ու քաղաքական պատրաստության ծրագրերի լավագույն, լրիվ ու վորակով բարձր կատարման համար։*

§ 2.

*Մրցակցությանը մասնակցում են ԿԿԲ բոլոր զորամասերն ու բոլոր միավորությունները։*

§ 3.

*Մրցակցությանն առավելագույն չափով ներգրավելու համար կարմիր բանակայինների ամբողջ մասսային ու պետկազմին՝ օգտագործել հարակից «մըր-*

ցակցության մեջ ԿԿԲ զորամասերի գնահատականի համար հիմնական ցուցանիշները»։

Այդ ցուցանիշներն օգտագործել նույնպես ծավալելու համար սոցմրցակցությունը ստորաբաժանումների ու մարտիկների միջև։

§ 4.

Գնդերի ու դիվիզիաների միջև մրցակցության արդյունքների ստուգումը պետք է կատարեն ԿԿԲ շտաբն ու Քաղվարչությունը մայիսի 10-ից մինչև 20-ը, իսկ զորամասերի ստորաբաժանումների միջև՝ գնդերի ու դիվիզիաների հրամանատարները՝ մինչև ս. թ. մայիսի 10-ը։

§ 5.

Մրցակցության արդյունքները հաշվի առնել ընդհանուր արդյունքների ամփոփման ժամանակ՝ ուսումնական տարվա վերջում։

Զորքերի ժամանակավոր հրամանատար՝ ՍՈԿՈԼՈՎ.

ՀՌԽ անդամ՝ ՇԻՖՐԻՍ

---

## ՀՐԱՄԱՆ 16 (ԴԱՍԱԿԻ ՈՒ ՎԱՇՏԻ ՀԱՄԱՐ)

### ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Գնահատելու համար ԿԿԲ զորամասերը 1933 թվի ձմրան շրջանի մրցակցության մեջ.

(դասակի ու վաշտի համար)

ա. Քաղաշխատանքն ու քաղպատրաստությունը բոլոր զորամասերի, բոլոր մարտիկների ու պետկազմի համար.

1. Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ հունվարյան պլենումի վորոշումների գերազանց յուրացում։

2. ԱԽՍՖՀ Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի վորոշումների գերազանց յուրացում (ազգային դիվիզիաների համար)։

3. Կոլտնտեսականների համամիութենական համագումարի դիմումի և համագումարում արտասանած ընկ. ընկ՝ Ստալինի, Կագանովիչի, Մոլոտովի, Վորոշիլովի Յակովլևի ճառերի գերազանց յուրացում։

Թերթի ամենօրյա ընթերցում։ Միջազգային ու ներքին հիմնական քաղաքական անցքերի գերազանց յուրացում։

5. Ակտիվ մասնակցության գարնանացանի կամպանիային։

Բացի դրանից՝

Միջին պետկազմի համար (դասակի հրամանատարի, վաշտի հրամանատարի, քաղղեկի համար).

1. Գերազանց գնահատականով ժամանակին քննություն տալ (զաչոտներ) պետկազմի լենինյան պատրաստության յուրաքանչյուր թեմայից։

2. Գերազանց իմանալ Կարմիր բանակայինների տրամադրությունները և ապահովել ստորաբաժանման քաղ-բարոյական դրությունը։

3. Ունենալ «գերազանց» գնահատական բոլոր խմբակների քաղպարապմունքների յուրացումից (բարձրացած պահանջկոտությամբ)։

4. Քաղպարապմունքների համար Կարմիր բանակայինների առանց խոչընդոտների ու բարձր վորակով ինքնապատրաստություն։

5. Ակտիվ օգնություն խմբակավարներին՝ քաղպարապմունքների համար պատրաստվելու և քաղպարապմունքներն անցկացնելու համար։

6. Քաղինֆորմացիայի ամենօրյա անցկացում։

7. ԲԳԿԲ Քաղվարչության № 17 հրամանի բարձր վորակի կատարում։

8. Լավ հիմքերի վրա դնել սոցմրցակցության ղեկավարությունը, պարբերաբար մարտիկին հասցնել ուսուցման պլան և դնել սոցմրցակցության ընթացքը և կարմիր բանակայիններին հասցնել մրցակցության արդյունքները։

9. Տալ հրաձգությունների, տակտիկան ու տեխնիկական պատրաստության ժամանակին ու բարձրորակ քաղապահովում։ Անցկացնել տեխնիկական խմբակներից մարտիկների 100 տոկոսին։

Կանոնավոր լույս ընծայել բաղմատիրաժներն ու



էլեկչովկաները (վոչ սակավ, քան շաբաթը 2 անգամ) և նրանց մեջ լավ լուսաբանել վաշտի (դասակի) ուսուցման ու կյանքի բոլոր հիմնական հարցերը, ծավալել կազմակերպչական մասսայական աշխատանք. սիստեմատաբար դաստիարակչական աշխատանք տանել զինթղթակիցների հետ։

11. Վաշտային գրադարանի լավ աշխատանք։

12. «Լավ» գնահատականով հանրակրթական պատրաստություն։

## Բ. Շարային ու Ֆիզպատրաստություն

Ձմրան շրջանի վերջում հասնել շարային տեսակետից դասակի ու վաշտի վերջնական մշակման։

2. Հասնել դասակի ու վաշտի գերազանց կերպ ու կեցվածքին (վիպրավկա)։

Գերազանց արտաքին տեսք՝ թե շարքում և թե շարքից դուրս։

4. Գետին մոտենալը, հրամանների կրկնելը, կատարման մասին զեկուցելը, դարձումներն ու հրացանային նվագները։

5. Խոչընդոտների հաղթահարումը, աշխատանքը ֆիզգործիքների վրա ու սվինամարտը՝ համաձայն մարտիկի ու մանր ստորաբաժանումների պատրաստության ձեռնարկի։

6. Պատրաստ աշխատանքի ու պատրաստության («գտո») նշանի համար սահմանվում են հետևյալ նորմաները.

ա) միջին ու կրտսեր պետկազմի համար 100 տոկ.
բ) սոսկական կազմի համար . . . . . 50 տոկ.
գնդային դպրոցների կուրսանտների համ. 75 տոկ.

7. Բոլոր ատրճանի պետկազմի համար պատրաստություն՝ փոխադարձ փոխարինման և հաջորդ աստիճանում փոխարինելու սկզբունքի հիման վրա։

### գ՝ Հրաձգային պատրաստություն

Դասակի ու վաշտի համար

Մշակել 4 խնդիր զենքի սահմանված տեսակներից 32 թվի հրաձգությունների կուրսով լրացուցիչ ցուցումներով։

2. Պատրաստություն ձեռքի նռնոնետումից ու հրացանային նռնակներով հրաձգությունից, մշակել 1-ին խնդիրը ձեռքի նռնակների նետումից 1 խնդիրը հրացանային նռնակներով հրաձգությունից (32 հրաձգ. կուրս)։

3. Զենքի ու հրաձգային գործիքների գերազանց խնամում, պահպանումն պահում ու զորություն։

### դ. Տակտիկական պատրաստություն

1. Մինչև ձմրան շրջանի վերջը վերջնականապես մշակել դասակն ու վաշտը 4 խնդրից՝ յերթ, պաշտպանություն, հարձակում, հետախուզություն։

2. Խնդիրները պետք է մշակվեն «լավ» գնահատականից վոչ պակաս։

### յե՝ Տեխնիկայի ուսումնասիրություն

Տես հավելվածներ.

№ 1 Հրետանի։

№ 2 Ավտոզրահատանկային գործ։

№ 3 Ավիացիա։

№ 4 Կապ։

№ 5 Ճարտարագիտական գործ։



№ 6 Ռազմական գործ։

№ 7 Հակաօդային պաշտպանություն։

### զ. Պահակային ծառայությունն ու ներքին կարգ ու կանոնը

#### ա. պահակային ծառայություն

1. Հաստատապես գիտենալ և արագ կատարել պահակային ծառայության կանոնագրքի բոլոր պահանջները։

Որվա վերակարգի անձանց պատրաստությունը և վերահսկողությունը ներքին ծառայության կատարման վրա դասակի ու վաշտի հրամանատարների կողմից։

#### բ) Ներքին կարգ ու կանոնը

1. Ստույգ կատարել որվա վերակարգի ունեցած պարտականությունը։

2. Որինակելիորեն պահել զորանոցային շենքերն ու ինվենտարը.

3. Ռացիոնալ ձևով պահել ու պահպանել զենքն ու հանդերձանքը շենքում։

4. Կազմակերպվածություն յուրաքանչյուր ստորաբաժանման, յուրաքանչյուր մարտիկի ու հրամանատարի աշխատանքի մեջ՝ ըստ նրանց պարտականությունների։

5. Մարտական պատրաստության մեջ լրիվ վերացնել պրոգուլները։

6. Պետկազմի ու մարտիկների մաքրասիրություն և անձնական առողջապահություն։

### ա. Ղեկազմի պատրաստությունը

1. Հրամանատարական ուսուցման լավագույն կազմակերպում և ապահովում։

2. Հրամանատարական որերի պահպանում և հրամանատարական բանվորական որվա նորմալացում։

3. Հրամանատարական ուսուցման հաշվառման, հաճախելիության ու յուրացման կոնտրոլի լավագույն դրություն։

### բ. Ղեկավարությունը

#### ա) ուժերի ու միջոցների դասավորությունը

1. Պաշտոնատար անձանց միջև պարտականությունները բաշխելն ու կրելը, վորն ապահովում է.

Վաշտի հրամանատարի համար. ուսուցման վերաբերյալ բեռնավորման ճիշտ բաշխումը, հսկողությունը վաշտի ծառայության ու կենցաղի վրա՝ դասակի հրամանատարների և այլ պաշտոնատար անձանց միջև։

Դասակի հրամանատարի համար. ջոկերի հրամանատարների ու իր օգնականի ռացիոնալ օգտագործումը մարտական պատրաստության, ծառայության ու կենցաղի հարցերում։

2. Մարտական պատրաստության ժամանակին ու լրիվ նյութական ապահովումը (ըստ տեսակների, շրջանների ու խնդիրների), զորամասի ծառայության ու գործունեության նյութական լրիվ ապահովումը և նյութական միջոցների ճիշտ բաշխումը։

Վաշտի հրամանատարի համար. նյութական ապահովումն ըստ ուսուցման շրջանների։

Դասակի հրամանատարի համար. նյութական ապահովումն ըստ խնդրի հերթական վարժության։

#### բ) Կենդանի ղեկավարություն

Մարտական ամբողջ պատրաստության ժամանակին պլանավորումը, վոր ապահովում է բավականաչափ ժամանակ՝ կատարողների կողմից պլանի մշակման համար և ամենից նպատակահարմար ձևով այն արտահայտելու տեղում, հաշվի առնելով տվյալ զորամասի առանձնահատկությունը։ Կատարողական պլանների բովանդակության ռեալ լինելը և նրանց ժամանակին կատարումը։

Մարտական պատրաստության սիստեմում ցուցադրական պարապմունքների իրագործումը՝ վորպես ուսուցման հիմնական մեթոդի։

#### գ) հաշվառում յեվ կոնտրոլ

ա) Կոնտրոլի վորակը, վորն իրագործվում է մարտական պատրաստության անհատական սպառիչ հաշվառումով.

բ) հաշվառման սիստեմի կազմակերպումը, վորն ապահովում է պաշտոնատար անձի համար ստորաբաժանման մարտական պատրաստության և դրության մշտական իրազեկ լինելը՝ կենդանի ղեկավարության կոնտրոլի ու զեկուցագրի հիման վրա։

### գ. Նյութական ապահովումը

#### ա) ծառայության ու կենցաղի նյութական ապահովումը

1. Զորանոցային շենքի դրությունը և օգտագործումը, ինչպես նաև կոմունալ տնտեսության դրությունը. պայքարը շենքերի փչացածքների դեմ, զորա-

նոցային ինվենտարի դրությունը և պահպանումը նրա հաշվառման դրությունը ստորաբաժանման մեջ։

2. Հագուստեղենի, մարդկանց ու ձիերի այն հանդերձանքի խնամումն ու պահպանումը, վորոնք գտնըվում են անհատական ու խմբակային օգտագործման մեջ։

բ) ուսուցման նյութական ապահովումը

1. Վաշտային հրաձգարանների ու հրաձգավայրերի դրությունն ու սարքավորումը՝ համաձայն 1932 թ. հրաձգությունների կուրսի Հրաձգային Գործի հրահանգի։

2. Հրաձգային գործիքների առկայությունը, դրությունն ու հաշվառումը։

3. Վաշտերում ավազով արկղների դրությունն ու սարքավորումը։

4. Զենքի դրությունը, խնամումն ու պահպանումը։

5. Ֆորմուլյարների ու փորձահրաձգության քարտերի առկայությունը և զենքը ժամանակին դիպուկ խփելու բերելը։

6. Մաքրման համար սարքին պատկանելիքներով լրիվ ապահովումը։

ԿԿԲ Շտաբի մարտական պատրաստության բաժնի պետ

ԿԱՎԼԻՇՎԻԼԻ

ԿԿԲ քաղվարչության 2-րդ սեկտորի պետ՝

ԲԱՐԲԱՐԻՆՍԿԻ

## ՊԱՀԱՆՋՆԵՐ

### Տեխնիկայի ուսումնասիրման բնագավառում
### (դասակ, վաշտ)

Զորքերի մասնագիտական պատրաստությունն անց է կացվում ձմրան ընթացքում մշակվող 4 տակտիկական խնդիրների սահմաններում։



Հավելված № 1

## Հ Ր Ե Տ Ա Ն Ո Ւ Ց

### Միջին պետկազմը

1. Յուրացնել գնդային ու դիվիզիական հրետանու հատկություններն ու գործադրությունը։

2. Գիտենալ նյութական մասի ամենագլխավոր մասերի կառուցվածքը։

3. Կարողանալ լցնել հրանոթը և կրակել ուղիղ նշանառությամբ, վտանգավոր մոտիկությամբ գտնվող նշաններին։

4. Կարողանալ տալ հրետանուն նպատակացուցումներ։

Հավելված № 2

## ԱՎՏՈԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՑ

### Միջին պետկազմը

1. Գիտենալ Տ. 27 տանկետկայի, Տ-26 տանկերի Ա—2, ԲՏԴ—8,12 զրահմեքենայի ամփոփ նկարագրությունը։

2. Յուրացնել «լավ» գնահատականով Տ 27 տակտիկական հատկությունը և նրա մարտական գործադրության հիմնական դրությունները (տանկետկաների մարտական գործողության հրահանգի ծավալով)։

3. Նույնը Տ-26 վերաբերյալ (Մեխմասերի մարտական կանոնագրքի մաս 2-րդի ծավալով)։

4. Գործնականապես կարողանալ օգտագործել ազդանշանները մեխմասերի և զորքերի այլ տեսակների

միջև (ազդանշանների մասին և նրանց օգտագործման կանոնների մասին մեխմասերի և զորքերի այլ տեսակների միջև ժամանակավոր հրահանգով)։

5. Գիտենալ ավտոզրահատանկային մասերի կազմակերպում մինչև գումարտակն ու բաժնյակը։

Հավելված № 3

## ԱՎԻԱՑԻԱՅԻՑ

### Դասակի հրամատարի համար

Այս բոլորն, ինչ տված է ջոկի հրամատարի համար։

2. Ուսումնասիրել սավառնակի նշանակությունը յերկրի հետ և գիտենալ, թե ինչ դեպքերում պետք է փռել սպիտակ քաթաններ դասակային տեղամասի ճակատում։

### Վաշտի հրամատարի համար

1. Այն բոլորը, ինչ վերաբերվում է դասակի հրամատարին։

2. Գիտենալ ուղեկցող սավառնակների տակտիկական հատկությունները։

3. Գիտենալ օդային դիտության ու կապի պոստերի կազմակերպումը Գոլխեմ-ի քաթանով աշխատանքի տեխնիկական կողմը։ Հաղորդագրության ժապավենի ընդունելությունը և կեռով զեկուցագրերը սավառնակին հանձնելը։



Հավելված № 4

## ԿԱՊԻՑ

### Միջին պետկազմի համար (զորքերի հիմնական տեսակների համար)

1. Գիտենալ գնդի կապի միջոցների տակտիկական տեխնիկական հատկությունները. Ունաֆ հեռախոս, մերձավոր գործողության ԼՑՈՒԿԱՄ լապտերներ, դաշտային հեռախոս 6 ՊԿ ռացիա։

2. Կարողանալ օգտվել հրամատարական կոդից։

Հավելված № 5

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՑ

### Միջին պետկազմի համար

1. Կարողանալ կազմել ճարտարապետական աշխատանքների պլանն ու հաշվառքներն իր ստորաբաժանման կամ զորամասերի մասշտաբով։

2. Կարողանալ կազմակերպել հակատանկային պաշտպանողական շերտի, ճանապարհների, կամուրջների հետախուզությունը։

Գիտենալ իր ստորաբաժանման սպառազինման համար սահմանված ճարտարապետական գույքի ցուցակային (տաբելային) մասը։

Հավելված № 6

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՑ

### Միջին պետկազմի համար

1. Նույնը, ինչ սովկական պետկազմի համար և բացի դրանից, գիտենալ ավիացիայի, հրետանու, մոտոմեխանիկական մասերի սպառազինության քիմիա-

կան միջոցները։ Գիտենալ այն խնդիրները, որը ուժերից վեր չեն լինի այդ միջոցներին.

Հավելված № 7

## ՀԱԿԱՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱՁԻԳ ՎԱՇՏԵՐ

Դասակի ու վաշտի հրամանատարների համար.—Նույնը, ինչ ջոկի հրամանատարի համար և լրացուցիչ կերպով.

ա) Գիտենալ հրացանով ոդային նշաններին կատարվող հրաձգության թեորիայի հիմունքները.

բ) Գիտենալ ոդային նշաններին կատարվող հրաձգության պայմաններ զորքերի համար։

## ԳՆԴԱՑՐԱՅԻՆ ՎԱՇՏԵՐ

Դասակի հրամանատար.—Նույնը, ինչ ջոկի հրամանատարի համար և լրացուցիչ կերպով.

ա) Գիտենալ գնդացրերով ոդային նշաններին կատարվող հրաձգության թեորիայի հիմունքները։

### Վաշտի հրամանատարի համար

ա) Գիտենալ գնդացրերով ոդային նշաններին կատարվող հրաձգության թեորիան։

## ՈԴԱՅԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՊԻ ՋՈԿ

### կապի դասակի հրամանատար

ա) Գիտենալ ջոկի ծառայության կազմակերպումը՝ մարտի ժամանակ։

ԿԿԲ Շտաբի մարտական պատրաստության բաժնի
պետ՝ ԿԵՎԼԻՇՎԻԼԻ



ՀՀ Ազգային գրադարան
NL0215893

10к

41.334